

Ցանկացած իրողություն սեփական գոյությունն ապահովելու համար, տիեզերքի մերձակա ու հեռավոր բոլոր ազդեցությունները հավասարակշռող միկրոկոսմոս է ենթադրում իրենից, և տրամաբանորեն բոլոր համակարգերի միասնության շղթան յուրաքանչյուրի միջոցով առանձին, մեզ նորից վերադարձնում է հազար անգամ փորձված իմաստությունը. □ Ամեն ինչ արտացոլված է ամեն ինչում՝ «Հերմես Տրիսմեգիստ», ուստի աշխարհի ԸՆԹԱՑՔԸ բխում է իր իսկ չընդմիջարկվող կերպարանափոխությունից, որի դիտորդն ենք: Թոմաս Պինչոնի հերոսը՝ Կալիստոն՝ փորձելով փրկվել էնտրոպիայից, տեղավորվում է □ փակ՝ համակարգում և, համաձայն սեփական տեսությանը. □ Մեկուսացված համակարգը՝ գալակտիկան, շարժիչը, մարդը, մշակույթը, ինչ պատահի՝ անընդհատ պետք է ձգտի առավել հաստատուն վիճակի՝ դատապարտում է այն դանդաղ մահվան □ ...՝: Նա կանխատեսում էր սեփական մշակույթի ջերմային մահը, երբ գաղափարները չեն կարող այլևս փոխանցվել, քանի որ համակարգի բոլոր կետերի էներգիան, ի վերջո, հավասարվում է և ինտելեկտուալ շարժումը, այդ ձևով, սկսում է դադարել: Եթե էնտրոպիկ միջավայրը հավասարազոր է դառնում քաոսին, ապա ստեղծագործության մեջ անմիջապես չի գիտակցվում որպես բարու հակառակ բևեռ (խաղաղություն (կարգ ու կանոն) - բարի, քաոս - չար), այլ տողի այլակերպման (երկրորդ տեքստի ընթերցմամբ) միջոցով քաոսն իր ներսում զուգորդում է աստ - լինելության (Da -Sein) գաղափարը, որն իրական աշխարհն է: Իրական այս աշխարհում էլ կենսագործվում է մարդու ներհայեցումը և ԱՅԼ- ա - գոյության սահմաններում դառնում առասպելաբանական - իմացաբանական նախահնչույթ: Պատմականորեն առանձնացնելով և հիմնավորելով □ աշխարհ՝ բառի պատմության ընդհանուր տեսությունը, Հայդեգերը սահմանազատում է նրա մարդաբանական իմաստը առարկայի ամբողջության հասկացությունից, ուստի □ Լինել՝ նախևառաջ նշանակում է լինել տեսանելի, ունենալ սեփական անպայմանականությունը՝ ՍՏՈՒՅԳ - ության չափով, նշանակում է լինել ԳՈՅԻ ոլորտում, անցնել ամեն տեսակ բացակաների սահմանները, ինչպես բոլոր հոգիներն են Գոյի մեջ, այլ կերպ՝ սեփական անձկության խորխորատում գոյությունը չդարձնել □ բուսաբանական ավերակ՝ (Պոլ Վալերի):

Սկզբի և Վերջի անտրոհելիությունը տանում է դեպի եզակի դատարկություն, ուր ոչնչացող վայրկյանները իրենց կոտորակման հետ շարունակաբար ընդլայնում են սեփական տեսադաշտը և ճշգրտորեն սահմանում պահանջվող միտքը. □ Սկզբից էր Բանը, եւ Բանը Աստուծոյ մօտ էր, եւ Բանը Աստուած էր: Նա սկզբից Աստուծոյ մօտ էր: Ամենայն ինչ նրանով եղաւ. եւ առանց նրան չեղաւ ոչինչ, որ եղել է: Կյանքը նրանով էր: Եւ այդ կեանքը մարդկանց լոյս էր: Եւ լոյսը խաւարի մեջ լուսաւորում է, եւ խաւարը նրան չնուաճեց՝: Լույսի փոխաձևման՝ տրոհումների և միավորումների անվերջ շղթան արտաքին աշխարհի ընկալելի լույսից հասնում է մինչև Գոյի (մարդու) ներքին (հոգու) տիրույթ, զուգակցվում ԼՈԳՈՍ - ին (ԲԱՆ - ին)՝ ստեղծելով ալքիմիան, որի մասին խոսում է Վարուժան Այվազյանը և որը Հակոբ Մովսեսի պոեզիայի առանցքն է կազմում, նաև՝ Լույս - ա - պտույտի շառավիղը: Լույսը գիտակցվում է ամենից առաջ որպես կոտորված(լատ՝ մեդիատոր) ժողովածուի բոլոր բանաստեղծություններն իրար կապող միջանկյալ օղակ, և կազմվում է իր՝ տեքստի ալքիմիան □ ցերեկվա սահմանից դուրս նյութեղեն տեսքի - կառուցվածքի բերել... , որոնել - բացելով հենց լույսի ճամփան: Նրանց համարձակությունը անանվանելի էր, քանի որ աստվածությանն էր նկրտում...՝: Ժողովածուում առկա են երկու հակադիր՝ զգայական - մտավոր, մարմնական - հոգևոր երկնային - հոգևոր միջ - ոլորտներ, որոնց □ ներսի՝ տարածաժամանակի էություն էլ հեղինակը տեղավորում է ՏՈՂԸ (որ ԲԱՆՆ է = է= Լոգոս), ասելիքը մղելով առավել գոյաբանական տիրույթ: Ինքը՝ □ Լույս զվարթը՝ փայլում է մերթ

արտաքին, մերթ մերթին աշխարհների միջև՝ միջ - ոլորտներում ստեղծելով կոսմոլոգիական - գոյաբանական տարածքներ:

Լույսի՝ միջ - ոլորտին պատկանելն էլ գոյավորում է սահմանի և անսահմանի միասնությունը, բայց և միաժամանակ ստեղծում այս երկու հակադրամիասնությունների տարբաժանումը և լույսի գոյությունը որպես անկախ ձև:

□ Ոչինչ այնպես չի ուրախացնում գրողին, որքան □ նոր ընթերցումը՝, - գրում է պոստմոդերնիզմի դասական ներկայացուցիչ Ումբերտո Էկոն և ավելացնում, - որի մասին նա չէր մտածել և որը բացահայտում է ընթերցողը՝:

Տեքստի (բանաստեղծության) մետաֆիզիկական կառուցվածքում լույսը ձևաստեղծվում է երկու ճանապարհով՝ նախ՝ տիեզերական - գոյաբանական - տրամաբանական (նյութական և հոգևոր ոլորտներում՝ մակրո և միկրո կոսմոսների ռեալությունների միջ-ոլորտներում) և երկրորդ՝ նշանահամակարգի փոխներթափանցման (նյութական աշխարհի □ խավարում՝ խորհրդանշում է աստվածային լույսի եռամանակ մթնումը): Լույսը Բնությունն ինքն է (= է), որ գտնվում է բոլոր մարմիններում՝ երկնային և երկրային: Եվ քանի որ աստվածաբանական փիլիսոփայությունը տիեզերքը համարում է արարչականի և նյութի (հոգու և մարմնի) միասնություն, ապա կոսմոլոգիական առաջնակարգը համարվում է մարդը, միակ տիեզերածին էակը (ըստ քրիստոնեական մեկնության), որ նոր իմաստ է կրում, քանի որ իր ներսում կրում է արարչական լույսը, միակը, որ ի հայտ եկավ Աստծո կերպարանքով: Հետևությունը՝ մենք չգիտենք ով է մարդը, թեպետ ինքներս էլ նույն իրականության և քաղաքակրթության կրողն ենք, հետևությունը՝ մարդ - գաղտնիք է (մարդը՝ բացառիկ - իրն ինքնին):

Լույսը Աստվածն է, Կյանքի աղբյուրը, Սկիզբը արարչական, Լոգոս - ճշմարտությունը, Կատարյալը.

Եվ ես ումի՜ց խնդրեմ երգերը իմ, քանզի արդեն սկսվում է իմ այգեկուրծ լույսից: (29)

Լույսն ԱՍԱՑԱՆ տիրույթում է, միավորող օղակը, քանզի կազմավորում է Քերթողի (գրողի) և քերթվածի (Գրի) Այլ - ա - գոյ համակեցությունը, ԳԻՐԸ տեղափոխում է ԱՅԼ - ա - տարածք և հնարավորություն տալիս գտնվելու ամենաբարձր ոլորտում: Մտքի այսպիսի ընթացքը մղում է տիեզերքի միջոցով հասնելու ինքնաճանաչման: Հին հնդկական դիցաբանության մեջ մարդկային մարմինը նույնացվում էր բնությանը: Այսպիսի զուգադրություններ կատարում էին նաև հին հույն փիլիսոփաները, որոնց միջոցով հաստատվում էր մարդու և մակրոկոսմոսի նույնականությունը, ուստի և բացառվում էր բոլոր հարցերը մարդկային գիտակցության առանձնահատկությունների, բարոյականության և գեղագիտական ըմբռնումների մասին: Եվ ընդհանրապես էլ պետք չէ գլուխ կոտրել՝ հասկանալու համար՝ ինչ էր ուզում ասել Վարուժան Այվազյանը □ Լույսն անմեկնելի՝ հողվածում, քանի որ ալքիմիան, որ Լոգոսի տիրույթում է և ձևաստեղծում է Լույսը (այստեղ այն չի ընկալվում որպես սովորական քիմիական ռեակցիա (երևույթ)), ոչ այլ ինչ է, քան ինքը՝ ԲԱՆ - անքննելին (աստվածային խոսքը), ոչ ռացիոնալ տրամաբանության (մտածողության) թափանցումը ռացիոնալ մտածողության տիրույթ: Լոգոսի միջոցով լույսի մեկնությունը ըմբռնել կենցաղավարության շատ որոշակի մակարդակում՝ նշանակում է ԱՆՀԱՍ լինել խոսքի (ԲԱՆ - ի) կոսմոլոգիական շերտերին. □ Արվեստի յուրաքանչյուր ստեղծագործություն տարակարծություններ է առաջացնում. ոմանց կարող է դուր գալ, ոմանց՝ ոչ: Այսօրինակ տարակարծությունը անօրգանական բնույթ ունի, այն սկզբունքային չէ: Մեր անհատական ճաշակի կույր քնահաճությունը կարող է մեզ դնել դիրքերի թե այս և թե այն կողմում: Այստեղ բանն այն չէ, որ հասարակության մեծամասնությունը չի հավանում նոր երկը, իսկ փոքրամասնությունը հավանում է: Բանն այն է, որ մեծամասնությունը պարզապես չի

հասկանում այն': (Օրտեգա - ի -Պասեթ):

ԲԱՆԸ (խոսքը) - ԼՈՒՅՍԸ - ՄԱՐԴԸ - ԱԼՔԻՄԻԱՆ Է - ՀՈԳԻՆ - ՄԱՐՄԻՆԸ: Լսել Լոգոսը (Բանը), նշանակում է հասկանալ աշխարհաստեղծությունը, կարգը, աշխարհ - ա - կազմ - ա - խոսությունը, ինչպես Տիեզերքը, որ հավերժ է, և համաձայն նրա, ամեն ինչ իր - ա - կան - ա - ցել է և իր - ա - կան - ա - նում է: Լոգոսը ստեղծում է թ աշխարհ - հոգին' (Պլուտին), որ յուրօրինակ կապ է դիտվում որպես` բացարձակ Գոյի և Աշխարհի միջև:

Եվ եթե ելնենք այն դրույթից, որ մարդկանց պետք է մատուցել այն, ինչ նրանք գիտեն, ապա նրան դիմառնում է ձևակերպումը, թե` թ խոչընդոտների չեն հանդիպում լոկ նրանք, ովքեր ոչինչ չեն փնտրում' (Պոլ Վալերի): Աներևակայելի բան, որ ստեղծում է և Չ - ընթերցումի հոգեվարքից աղավաղված սիլոգիզմներ, և ընթերցված տողը այդպես էլ թողնում չընթերցված թ անգիտակցականից և անզգայականից` դեպի անգիտակցականն ու անզգայականը' (Պոլ Վալերի): Մտքի հուղարկավոր երթ: Ինտելեկտուալ վախճան: Եզակի համաձայնություն է կնքվում տեսածի և իմացածի միջև և հայտնաբերվում է այն Ուրիշը (որպես հասկացություն), որ պատվում է ալքիմիայի օրենքներով և դառնում ան - հասու, իսկ քեզ համար` խոչ -ընդոտ (խութ): Այս տեսակետը կարող է տարածվել մյուս տեսակետների վրա` տեսանողի թ տեսածի` թերացման կամ այլ պատճառով, սակայն պարտադրելի չէ, քանզի տեսանողությունը անհատական երևույթ է` ըստ մտքերի կարողության, քանզի մեր անսահմանությունը նրա (հոգու) անսահմանության մեջ է: Օրտեգան նրանց անվանում է թ զանգված', Պոլ Վալերին ձևակերպում է` թ - մարդու մեջ եղած փոքրիկ մարդը' (որը միշտ ենթադրվում է պարզունակ երևակայության մեջ, մենք ենք ստեղծում իմացությունից) ճամփորդում է ըստ իր բնույթի և հենց իր բնույթի մեջ (ընդգծումը հեղինակինն է), իսկ Հակոբ Մովսեսը հետևյալ պատկերն է ստեղծում.

Ադամորդու սիրով, որը վեր է ամեն ինչից, հույսով բանաստեղծի`

Այսպես տեսա լույսը: -

Իբրև հավերժության կարողություն,

Իբրև անմեռության պատկերք`

Այսպես էր այն դրված երկրի սեղաններին,

Որոնց շուրջը ապրող և մեռյալ նստած էին հացի: (13)

Եվ սա դառնում է բոլոր ճշմարտությունները հավերժական, անժխտելի ճշմարտությունների շարքում դասելու իմացաբանական հիմք, քանզի աշխարհի գոյության ժամանակով պայմանավորված նյութի անստեղծելիությանն ու անոչնչալիությանը ներհատուկ է դառնում նաև լույսի արագության անփոփոխելիությունը, և ժամանակի ընթացքը ընկալելի է դառնում մարդու` Գոյի` ծննդից մահ ընկած տիրույթում` հավասարաբեռ պատմության ժամանակին, քանզի Գոյի (մարդու) ապրելու (լինելու) ընթացքում կերտվում է պատմությունը, մահից հետո` դառնում պատմություն: